ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N1

ք. Նոր Հաճըն 22.11.2022թ.

ՀՀ Կոտայքի Մարզի Նոր Հաճըն համայնքի կարիքների համար Նոր Հաճըն համայնքի Նոր Արտամետ բնակավայրի ներհամայնքային փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության և եզրակացության տրամադրման ծառայությունների գնման նպատակով կազմակերպված «ԿՄՆՀՀ-ԳՀԾՁԲ-22/40» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Մառք» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 01236957, գործունեության հասցե՝ ք. Երևան, Պ. Սևակի 1 (այսուհետ՝ Մասնակից), որը գտնվում է գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում, «Գնումներ մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետով, ինչը բացահայտվել է պայմանագիրը կնքելուց հետո: Հիմք ընդունելով Նոր Հաճընի համայնքապետարանի և «Մառք» ՍՊ ընկերության միջև 2022 թվականի նոյեմբերի 07-ին կնքված N ԿՄՆՀՀ-ԳՀԾՁԲ-22/40-2 պայմանգրի 7.3 կետը՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Ուստի որոշում եմ՝

«Մառք» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐ